նել, աղբիւրից կամ գետից ջուր կրել ամեն օր, կերակուր եփել, հաց թխել, շատ տներում ամեն օր, որ մի տաժանելի գործ է. սերմացու ցորեն, բրինձ, գարի և կորեկ ընտրել, կթան գոմէշներն ու կովերը կթել, նրանց նորածին ձագուկներին խնամել, մածուն ու իւղ պատրաստել, տնային թռչուններին կերակրել և նայել։ Ամառնային ամիսներին, թթենու մատաղահաս ճիւղերը կտրատել օրը երեք անգամ, շալակով այգուց տուն կրել և մետաքսի որդերին կերակրել և լաւ խնամք տանել, կոկոնները քաղել, չորացնել արևի տակ, իսկ ընտիր տեսակի կոկոններից սերմացու վերցնել ու սերմերը հաւաքել մանր տոպրակների մէջ. պտուղների հասած ժամանակ, կաղնու և ընկուզենու ծառերը թափ տալ ու ժողովել, քաղած խաղողն ու այլ և այլ պտուղները դամբիւղներով կրել և տուն հասցնել և այլն և այլն։ Կարճ խօսքով՝ ուտիախօս և թրքախօս Հայ կանայք տնային աշխատութեան մէջ աւելի շատ են աշխատում և մեծ գործ կատարում, քան թէ՝ իրենց խստապահանջ ամուսինները դաշտային աշխատութեան մէջ։ Բայց ցաւելով պիտի ասել, որ ամբողջ երկրագնդիս երեսին ոչ մի տեղ, ոչ մի երկրում և գուցէ նոյն իսկ վայրենիների մէջն անգամ կին ասուած արարածը այնպիսի ցաւալի տարկէան ու ողբալի վիճակի մէջ չէ, ինչպէս որ Ուտիացոց դժբախտ երկրում։ Այս ծանր և անվերջ աշխատութեանց պատճառով ամբողջ օրը, առաւօտեան արշալոյսը դեռ չբացուած, Ուտիացի Հայ կինը անդադար աշխատում է շոգեշարժ մեքենայի պէս